

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

804

Ս. ՊՈԿՐՈՎՍԿԻՑ  
ՀԱՅԵԼ  
ԿՐՈՒԽՆԿԻ  
ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԹԱՐԳԱ. ԽԱԿՈ-ԱՊԵՐ



Տ. Ա. 1435. 2.

ՊԵՏՎԱՏ


1931

ՅԵՐԵՎԱՆ

22 JUL 2013

2011-051

7-78



Էջի մոտ՝ ճահճում ապրում եր կոռուկների ընտանիքը. հայր, մայր և ջահճների մի գույգ. Ահա թե մի անգամ ջահճելներից մեկին ինչ անսովոր արկած պատահեցր Գյուղի բերեխաները բռնեցին, նրան, դրին տոպրակի մեջ ու տարան ծախելու անտառապետին:

Անտառապետը սիրում եր ամեն տեսակի թռչուններ։  
Նա գնեց կոռունկի ճուտին և սկսեց ընտելացնել։ Կերա-  
կրում եր նրան հացով, հատիկներով և ինչ վոր ձեռք եր  
ընկնում։ Կոռունկի ճուտը սիրում եր ճոիկ, ճպուռ, բգեզ  
և այլ միջատներ։

Կոռնկաճութը շուտ ընտելացավ, ել չեր վախում, ել չեր թազնվում: Նա ամեն տեղ գնում եր թե անտառապետի իշտելից և թե յերեխաների, փորոնք նրան կերա-




1538 - 81

կրում ելին և վորոնք անունը դրին կռունկիկ; Եղ գեռ վոչինչ: Նա շատ բան սովորեց.—պարել, նստել, զլուխ սալ, ցատկուել, տեղնուտեղը: Նա եղափսով ուտելու պատառներ եր ձեռք բերում: Նա ամեն անդամ մի բան ստառում եր իր ալդ հնարքների և արարքների համար:


## II

Նա շատ արագ մեծացավ: Շուտով անկարելի յեղավ նրան սենյակներում պահելը: Ուրիշ ճարպիկը դարձավ: Վոչվոքի հանգիստ չեր տալիս, քիչ ել չարություն չեր անում: Կամ հաց եր թուցնում, կամ ջուր եր թափում, կամ մոտենում սեղանին և կտուցով վար թափում բաժակ և գավաթ:



Վորոշեցին կռունկին բակը տեղափոխել:

Անտառապետի բակը մեծ եր, շուրջը անտառապահների, ծառաների և բանվորների բնակարաններ: Բակում



կային տեսակ-տեսակ կենդանիներ. հավեր, բաղեր, սազեր, կատուներ, շներ, և ախոռներում՝ կովեր, ձիեր ու վոչխար:

Կոռւնկիկը ալդտեղ ել շուտով ընտելացավ բոլորին: Հպարտ-հպարտ գուրս ե գալիս բակի մեջ, վոչոքից շի վախում: Առա և արածում, վարսակ և ընտրում, բշտում ե հավերին և նրանց տաշակից ջուր խմում: Ես տեսակ բան ել եր անում.—Նենց տեսնում եր վոր լերկու աքլոր իրար են գալիս կռվելու, խկույն մոտենում եր և թշում նրանց դես-դեն: Առհասարակ սիրում եր կարգ-կանոն հաստատել:

Անտառապետը մի շարժում, անհանդիստ շուն ուներ: Նրան կանչում ելին Չեմբերլեն: Հենց վոր գուրս ե թոշում բակ, սկսում ե վազգզել դիս-դեն: Հաջում եր, կոնծկոնձում, թոշուն եր վախեցնում:

Կոռւնկիկը նայում եր նրան, նայում, հետո միանգամից բարկանում: մոտենում եր և մին ել կացով տալիս նրա ծոծրակին: Մեր Չեմբերլենը խկույն վժվժում իր ու, պոչն իրեն քաշելով պնակ մի անկյուն:

### III

Թի անգամ վազեցին լերեխաները և ճշացին:

— Մեր կոռւնկիկը թոշել ե սովորել: Թուավ կտուրը: Գուցե և բոլորովին թունի:

Անտառապետը դուրս յեկավ բակ. նայում ե և, խոկապես, փոքրիկ կոռւնկիկը թուել ե սրահի վրա. մի վոտով կանդնել ե ծգոտե կտրին և այնտեղից հպարտ դիտում ե շուրջը: Անտառապետը գրպանից հանում եր մի բուռ սիսեռ և ցուց տալիս կոռւնկին: Նա խսկուն կտրից ցած, սիսեռն անուշ ե անում:

Անտառապետը կերակրեց նրան սիսեռով, շոյեց և

հետո ձեռքերին առած բերեց սենյակը: Փոքրիկ կոռւնկը ամեն բանում լսում եր անտառապետին և թուլլ եր տագիս նրան անելու, ինչ ուղենա:

Անտառապետը պնակի մեջ հաց փրթեց և սկսեց կերպերել նրան ձեռքով: Հետո մի անտառապահի ասաց, վոր նա կոռւնկիկին բոնի, իսկ ինքը նրա վոտին հագցըրեց մի ալյումինե ողակ: Ողակի վրա սուր բզով գրված եր: «Բոնված ե ձշկուտ լճի ճահճից. Մոսկովյան նահանգ, Ռուսկի գավառ, 1870 թիվ ոգոսառուի 4, անսւնը կոռւնկիկ»:

— Ե, հիմտ նա շան պես վկնոց ունի. յեթե մեկը բոնի սրան, կիմանա վոր մերն ե:

Անտառապետը ծիծաղեց և փոքրիկ կոռւնկին բաց թողեց դարձյալ բակը:

### IV


Ահա անցավ ել մի առժամանակ: Կոռւնկը սկսեց ավելի հեռուները գնալ զբուանքներ անելու թոշում եր կըտուրի վրալից և մինչեւ մարգագետին: Մարգագետնում բոնում եր ճպուռ ու ճոիկ: Յերբեմն ել հասնում եր ճահճ և սկսում լրտուկ և գորտ վորսալ:

Յերեխաներն սկզբում շատ ելին վախում, վոր նակթոնի և ել յետ չի գա: Բայց փոքրիկ կոռւնկը որք յերկու անգամ տուն եր վերադաւնում: Առաջին անգամ գալիս եր ժամի մեկին յերբ զանգը ճաշի յեր կանչում անտառապահներին և բանվոր-ծառայողներին: Արդ ժամանակ տնտեսուհին կերակրում եր բակի թոշուններին: Յերեկորդ անգամ վերադաւնում եր իրիկնապահին, յերբ անասուններին բերում ելին ջրելու: Արդ ժամանակ բակում ջրնորից ջուր ելին քաշում, և կոռւնկիկը կտուցն անշուշտ կոխում եր գուցի մեջ ու ջուր խմում: Դրանից հետո գնում

Եր ծածկի տակ և այնտեղ անցկացնում գիշերը մինչև առավոտ:

V

Թուչունները թուան աշնանը դեպի հարավ, տաք կողմեր: Առաջինը թուան ծիծեռները, նրանց հետեւից ծիծեռնակները: Հավաքվեցին չվելու և սարյակները: Նրանք թուչում ելին մարգագետինների վրայով յերամ-յերամ: Հետո նստում ծառերին և այնպես սուլում, դժվարում, ասես, վատ գործարանի շրուղած մեքենաներ լինելին:



Յերջապես, նրանք ել թուան:

Սեպտեմբերյան մի պայծառ որ յերկաց կոռւնկների յերամը: Նրանք 15 հատ ելին: Նրանք թուչում ելին արագես,

ինչպես այդ ցույց եւ տված պատկերի վրա: Նրանք թուչում ելին անտառապետության վրայով և կանչում: «Կըու, կըու, կըու»:

Փոքրիկ կոռւնկը թեքեց գլուխը վեր և յերկար հետեւմ եր նրանց: Յերբ նրանք անհետացան նրա աչքերից, փոքրիկ կոռւնկը թափահարեց թևերը և մի ամբողջ ժամ պատվառմ եր մարգագետնի շուրջը, բարձրանում ողի մեջ, իջնում գետին:

Մյուս որը կրկնվեց նույնը: Կրկն մի կողմից յերևաց կոռւնկների խումբը: Այս անգամ փոքրիկ կոռւնկը վոչ միայն չթուավ, այլև արձագանգեց նրանց ձախներին: Նրա ձայնը հնչում եր և թավ, կարծես թե փշում ելին պղնձե խողովակ և խփում ելին պղնձե պնակներ: Անտառապահները գլուխները շարժելով ասում ելին:

— Մեր կոռւնկիկն անշուշտ կթռնի: Յեվ միշտ վոր: Մի անգամ անտառապետության վրա յերևաց կոռւնկների մի մեծ յերամ: Դեռ հեռվից լավում եր նրանց կոկողցը: Յերբ բանվորները նախում ելին կոռւնկներին, հանկարծ հառաջեցին: Զահել կոռւնկը մարգագետնից վեր բարձրացավ և ըսկավ յերամի յետելից: Բայց յերամը շատ բարձր եր, իսկ նա ցածր:

Հանկարծ նա սկսեց յետ դառնալ և ցած իջնել: Նա մի մեծ շրջան արեց մարգագետնի վրա: Այդ ժամանակ արդեն շատ բարձրացավ և շատ լավ տեսնվում եր թե ինչպես նա, կոռւնկիկը, հասավ չվող թուչուններին:

— Գնաս բարով, կոռւնկիկ, — զոչեցին մանուկները: Գարնան հետ ելի վերագարձիր մեզ մոտ:

VI

Ուր չվեցին կոռւնկները:

Թուչում ելին նրանք շատ յերկար, դեպի հարավ, միշտ դեպի հարավ: Նրանք սլանում ելին անտառներով, տափաս-



տաճներով, սարերով և ձորերով և հասան տաք լերկրներ։  
Իջան մի ահազին լերկար գետի կաղմած կղղու վրա, վոր  
ծածկված եր թփերով, յեղեղներով և բարձր խոտերով։  
Այդտեղ և մնացին ամբողջ ձմեռը։

Պետք ե ասել, վոր այդտեղ բոլորովին ձմեռ չկար։  
Այդ Աֆրիկան եր Զե վոր այնտեղ վհչ սառնամանիք և  
լինում և վհչ ձյուն։ Կոռւնկներն արդաեղ ապրեցին մի քա-  
նի ամիս։ կերակրվեցին գորտերով, մորեխով և ամեն տե-  
սակ պառուցներով։ Ամեն որ թոշում ելին հացաղաշեր-  
ը և այնպես կուշտ ուտում, վոր գժվարությամբ ելին վե-  
րադառնում իրենց կղղին։ Նրանք ահնաեղ կուշտ ջուր ե-  
լին խմում և հանգիստ քնում խիտ յեղեղնուտում՝ մինչև  
առավոտ։

Ամեն բան այստեղ ահնպես չեր, ինչպես մեզ մոտ։  
Գետերում լողում ելին ահազին կոկորդիլոսներ և բե-  
զեմոտներ։

Ոգում թոշում ելին զարմանալի թոշուներ, ծառե-  
րի վրա մագլցում ելին կապիկները։

Յեկ մարդկեկ ել այդտեղ մի ուրիշ տեսակ ելին։ Նը-  
րանք սև ելին և ապրում ելին յեղեղնյա տներում, վո-  
րոնք նման ելին խոտի մեծ-մեծ դեղերի։

## VII

Ահա միանգամ այդպիսի մի գեղից գուրս լեկավ մի  
ջահել խափիկ։ Նրան կանչում ելին Բոնգո։

Այս, ինչ գեղեցիկ եր նա։

Դուք մի կարծեք թե նա բոլորովին մերկ եր։ Նրա  
մեջքին կար մի շատ լավ՝ կանաչ տերեներից գործած  
գոտի։ Առաջից ճոճվում եր գեղեցիկ զոգնոցը, վոր պա-  
տրաստված եր կատվի զոլավոր մորթուց, իսկ յետեկց  
շարժվում եր լեռպարդի պոչը։

Ամբողջ մարմինը նկարած, նախշած եր. Մարմի վրա  
կային ողակ-ողակ շրջաններ

Մինչև անգամ ճակատին կար յերկու կարմիր խո-  
պակ. իսկ շրթունք ներկելը ավելորդ եր, քանի վոր շըր-  
թունքները արյան պես կարմիր ելին. Աստամները փայ-  
լում ելին շաքարի պես: Ել ավելի լավ ելին աչքերը:  
Նրանք իսկ և իսկ յերկու թաց բալ ելին: Մազերը գան-  
գուր խոպաններ ելին, ինչպես սև գառնիկի մորթի:

Ավելի շատ գեղեցկություն տալու համար՝ նա վզից  
կախել եր մի շարք գազանների ատամներ, ականջները  
խրել եր յերկու թեթև բամբուկե ձողիկ, իսկ քթի մեջ  
մի փայլուն պղնձե ողակ: Նրա սպիտակ առաջին ատամ-  
ները այնպես ելին սրված, վոր սուր մեխերի պես ցցված  
ելին: Իրենց գյուղում շատ գեղեցիկ բան եր համարվում  
այդ:

### VIII.

Բոնգոն գետի մոտ մի թեթև մակույկ նստեց, վերց-  
ըեց յերկար ձողը և լողաց գեպի կղզին: Նա ալստեղ վա-  
զուց հետևում եր կոռւնկներին: Նա շատ եր բարկացել  
նրանց վրա այն պատճառով, վոր նրանք թռչում իջնում  
են իր դաշտի վրա և կորեկը տրորում:

Կոռւնկները շատ զգուշ են: Նրանք իսկուն թռչում  
են հենց վոր նկատեն վորսորդի նման մեկին:

Բայց Բոնգոն խորամանկ եր:

Բոնգոն արդեն յերեք որ առաջ մտել եր կղզին և  
խիտ յեղեգնուառում հյուսել մի փոքրիկ վրան:

Այդ վրանից կարելի յեր ծածուկ հետևել, թե ինչ են  
անում կոռւնկներն իրենց կարանը գալուց հետո:

### IX

» Բոնգոն դուրս քաշեց մակույկը ափ և մոտեցավ մար-  
դագետնին: Նա հանեց այստեղ խոշոր հատիկներով յի  
տոպրակը և ցանեց իր վրանից քիչ հեռու: Հետո խոտի  
վրա դրեց թոկից պատրաստած ողակը, վորի ծալորը պինդ  
կապեց թվից: Դրանից հետո նստեց իր վրանում և սկսեց  
սպասել:

Իրիկնապահին թռան յեկան կոռւնկները: Նրանք ա-  
մենից առաջ սկսեցին գետից ջուր խմել: Միքանիսը իրենց  
դուփմները և վզերը իջեցրին գետի մեջ: Այդ լվացվելու  
նման մի բան եր:


Հետո կոռւնկները յետ յեկան ափ, և սկսեցին կամաց-  
կամաց մանգալ մարգագետնի վրա: Մի կոռւնկ տեսավ  
փուած հատիկները և իսկուն կանչեց մյոււներին: Բոլոըը  
սկսեցին կտցահարել և ավելի մոռեցան ողակին: Հան-  
կարծ մի կոռւնկ խճճվեց ողակում: Այդ կոռւնկիկն եր,  
Խեղա կոռւնկիկը բոլոր ուժով չարչարվում եր, վոր վոտն  
ազատի ողակից: Բայց ողակը զըանից ել ավելի յեր ձըգ-  
գում: Կոռւնկիկը թափահարեց թեկը և բարձրացրեց հու-  
սահատ աղմուկ: Օմբողջ յերամը յետ գնաց մի կողմ և  
միանգամից թռավ:

Իր վրանից դուրս թռավ Բոնգոն: Բալի գույն աչքե-  
րը փայլում ելին: Շրթունքները ժպտում ելին: Նա ճոճեց  
իր պինդ նիզակը և պատրաստվում եր ծակել իր թշնա-  
մուն:

Կոռւնկիկը պառկեց մեջքի վրա, շարժեց վոտները և  
պատրաստվեց պաշտպանվելու:

Բոնգոն այն և նիզակը տալիս եր նշանին, բայց հան-  
կարծ թեկը թուլացան և նա սարսափած յետ թռավ:  
Վախից նրա աչքերը ճակատը թռան:

Բոնգոն գլուխը կորցրած ոլացավ գլուղ: Նա ուղիղ հարձակվեց դեպի մեծ թմբուկը, վոր կախված եր սրբազան ծառից և սկսեց թմբկահարել, աղմուկ բարձրացնել:



Սյու թմբուկը խփում ելին միայն այն ժամանակ, յերբ հրդեն եր լինում, մահ կամ ուրիշ դժբախտություն եր պատահում:

Թմբուկի գմբգմբոցը գալ թեցրեց անբողջ գլուղին: Բոլորը թողին իրենց գործերը և վաղեցին ժողովատեղին, թե ծերերը, թե կանալք, թե մարտիկները և թե մանուկները:

Յերբ բոլորը հավաքվեցին, Բոնգոն յերկու ձեռքն ել վեր բարձրացրեց և սկսեց պատմել:

Նա պատմեց, թե ինչպես ինքն ուղում եր վրեժ հանել կոռւնկներից, ինչպես ծուղակ գրեց նրանց բռնելու համար, և ինչպես բռնեց մի մեծ գորշ, մոխրագույն թոշուն: Բայց ալդ կոռւնկը հասարակ թոշուն չեր: Նա, Բոնգոն, բռնեց իսկական կոռւնկների թագավորին, վորովինեաև նրա վոտին արծաթե ողակ կա:

Իսկ և իսկ այգպիսի մի ողակ ուներ ծերունի Մանգու արքան, վորից բոլորն ել այնպես վախենում ելին: Յերբ Մանգուլին սպանեցին իր խստության համար, Բոնգոն ուրիշների հետ միասին նրա համար փոս փորեց: Յեկ նա շատ լավ հիշում ե, վոր Մանգուի ձախ վոտին կար մի արծաթե ողակ:

Հիմա Մանգուն հարություն ե առել, դարձել կոռւնկ և ապրում ե գետի կղզում:

Հիմա ինչ անել: Կասկած չկա, վոր Մանգուն կը բարկանա ու գլուղ կուղարկե ամեն տեսակ հիվանդություն ու մահ:

## XI

Բոլորն սկսեցին դուալ, գոչել և լաց լինել: Գլուղի կախարդները և ջադուները դուրս յեկան և առաջարկեցին իրենց ծառալությունը: Լավ վարձատրությամբ նրանք հանձնառու յեղան փրկել ժողովրդին անխուսափելի կորստից:



Մեկն ասում եր, թե պետք ե սպանել Բոնգոյին, կըտ-  
րել գլուխը և ցույց տալ նրան բարկացած Մանզուլին-  
Մյուսը խորհուրդ տվեց, թե Բոնգոյի փոքրիկ լեռեխա-  
ներին պետք ե զոհ բերել աստվածներին։ Յերբորդը պըն-  
դում եր, թե պետք ե խորովել և ուտել նրա սիրելի կը-  
նոջը, գեղեցկունի Մալոնգուն։

Բոլորն այդտեղ սկսեցին ել ավելի բարձր գոռալ-  
չետո բոնեցին իրեն, Բոնգոյին, և կապեցին ծառից, ու-  
րիշները քարշ տվին ալիտեղ նրա կնոջը, մի քանիսն ել  
զնացին վորսալու նրա յերեխաներին։

Թշվար Բոնգոյի վերջն եր։ Ա՛խ, նա ինքը իրեն կրա-  
կի մեջ զցեց, հայտնելով կուռնկի և ողակի մասին։

Գլխավոր կախարդ-քուրմի ձեռքից առան սրբազն-  
դանակը, վոր նրանով կտրեն կիսամեռ վորսորդի կոկորդը։  
Բոնգոն լաց լեղավ և սկսեց մնաս բարով ասել կյանքին։

Մին ել հանկարծ... ամեն ինչ փոխվեց...

## XII

Վրա հասան միքանի սպիտակ մարդիկ հրացաններով  
և ամենից բարձրահասակը հրամայեց, վոր Բոնգոյին ծա-  
ռից արձակեն։ Խափշիկները չելին սիրում սպիտակներին  
և վախենում ելին նրանցից։ Մալիտակները վախեցրել ելին  
նրանց իրենց հրացաններով, ծեծում ելին և ստիպում,  
վոր իրենց համար աշխատեն։

Նրանք խում ելին խափշիկների լավ հողերը և ողի  
ելին խմացնում։ Շատ չնչին գնով ձեռք ելին բերում փղի  
վոսկոր և գաղանների մորթի։ Բայց այդ սպիտակը այն-  
պիսին չեր։ Նա Գերմանացի էր, ուսումնական և ճանա-  
պարհորդ։ Նա լեկել էր ալստեղ, վոր ծանոթանա բնակիշ-  
ների հետ և գաղանանոցների համար վորսա զանազան  
կենդանիներ՝ թռչուններ, գաղաններ, մողեսներ ու ոձեր։

Վաղուց նա ապրում եր գյուղի մոտ խփած յերեք վրա-  
նում: Նա ընծայում եր լեռեխաներին հուլունքներ, պղնձե-  
ռղակներ և ականջի ողեր, վոր նրանք սովորեն իր վրա  
և թերեն իր համար ամեն տեսակ սովուններ, փոքրիկ  
գաղաններ ու թոշուններ: Բոլոր բնակիչները շատ հար-  
դում ելին նրան և համարում ելին աշխարհի ամենահզոր  
մարդը: Զե վոր նա թոել-յեկել եր նստած մի ահազին  
հրեշ թունի վրա, վորի հանած աղմուկից մարդիկ վախե-  
նում ելին ու թափվում գետին: Հետո նրա մոտ յեկավ մի  
սաղակ՝ առանց ձիու: Այդ սայլակն ել նույնպիսի աղմուկ  
եր հանում, փնչում-վրշում և ծուխ արձակում:

Սպիտակ մարդիկ արձակում ելին հրացանները և ա-  
ռանց դժվարության սպանում ելին բեգեմոտներ ու կո-  
կորդիլուներ:

Նրանք գիշերները այսպես պայծառ լույս ելին ա-  
նում, վոր ըջապատ լուսավորվում եր ցերեկվա պես:

Բարձրահասակ Գերմանացին հրամակեց, վոր իրեն  
տանեն կղզին տեսնելու կունկների թագավորին:

### XIII

Բոնդոն վախով մոտեցավ իր վրանին: Նա վախում  
եր թե հարություն առած Մանզուն իրեն կսպանի տեղն  
ու տեղը:

Յերբ մարդիկ տեսան կապած կունկիկին, թշվառ  
բոնդոն և նրաբոլոր ցեղակեցները ծունկի յեկան և սկսե-  
ցին գլուխ խոնարհել թունի առաջ:

Գերմանացիները մոտեցան կունկին: Առաջնորդը  
հրամակեց, վոր նրան ծածկեն վերաբերուցվ: Թունին գե-  
տին զցեցին, կապեցին թերերը ու վոսները: Գիտնականը  
հանեց նրա վոտից ողակը և կարգաց վրալի գիրը: Հե-

տո հանեց գրչահատ դանակը և ողակիը վրա դրեց հետե-  
յալ բառերը:

«Եյս ինչ թիվ ամիս և որ: Բանված է Սպիտակ նե-  
ղոսի վրա: Յերկիր Ռւգանդա, Ռւակեդի լճից դեպի արև-  
մուտք, Մրուլի գյուղի մոտ: Ռտառ Շմիդ»:

Գերմանացին հետո ելի ողակն անց կացրեց կուն-  
կի վոտը, կտրեց թուկը և բաց թողեց թունիս:

Կոռւնկիկը վագեց դես, դեն, ցատկեց և բարձրացավ  
յերկինք:

— Թոմիր, — ասաց գիտնականը: Յեվ յեթե ելի քեզ  
բոնեն Մասկվայի մոտերքում, թող իմանան, թե վորանեղ ես  
դու ձմեռել:

Ի՞նչ ԲԱՆ Ե ԹԻՉՈՒՆԵՐԻ ՈՂԱԿԱՎՈՐՈՒՄԸ:

Դուք կարծում եք, վոր կոռւնկի մասին գրածը հնա-  
բովի բան եւ:

Թոչուններին վորսում են աշնանը, վասներին անց  
են կացնում ալլումինե ողակ՝ մակագրությունը վրան ու  
բաց թողնում:

Իրան ասում են ողակավորում:

Միայն Գերմանիայում այս վերջին տարիներում ողա-  
կավորել են տասնյակ հազար վայրի թոչուններ: Նույնն  
ակսել են և մեզ մոտ անել: Ինչու համար եւ արդ:

Գուցե և պարապ են մնացել:

Մենք բոլորս գիտենք վոր թոչունները մեր մոտից  
չփում են աշնանը, իսկ գարնանը նորից վերադառնում են:

Հնումը այդ մասին պատմում ելին զանազան հեքյաթ-  
ներ: Հավատացնողներ կային, թե կոռւնկները գնում են  
լուսնի վրա: Գիտափյա ծիծենակների մասին պատմում  
ելին, վոր իբրև թե նրանք աշնանը սուզվում են գոր-  
տերի նման ջրի մեջ ու քնում այստեղ մինչև գարուն:



Ասողներ ել կային, վոր հնումը ամեն մի դատարկ բանի  
հավատում ելին հեշտությամբ:

Հետո, ճանապարհորդների շնորհիվ իմացան, վոր թու-  
չուները ձմռան ցրտին գնում են տաք յերկրներ:

Բայց թե ինչպես և ինչ ճանապարհներով, այդ մա-  
սին ել շատ հեքյաթներ ելին պատմում: Կարծում եյին  
թե թուչունները ուղիղ սլանում են դեպի հարավ, ասես  
թե կողմացուց ունենան, վոր իբրև թե մի գերբնական  
ուժ նրանց ճանապարհ ե ցուց տալիս:

Հիմա մենք գիտենք, վոր այդ այդպես չե:

Թուչունների ամեն մի տեսակն ունի իր ուրային ճա-  
նապարհը: Նրանք թուչում են վոչ այնպես անդիտակաց-  
րար և մի ինչ վոր խորհրդավոր ցուցմունքով, այլ ու-  
նեն իրենց ճանապարհի նշանները վորոնց շատ լավ հի-  
շում են ծեր թուչունները, իսկ ջահել թուչուններն ելնրան-  
ցից որինակ են վերցնում:

Թուչունները թուչում են ավելի շատ մեծ գետերի և  
ծովափերի յերկարությամբ: Լեռնոտ տեղերում թուչում  
են հովիտների և կիրճերի վրայով, ծովերը կտրելիս թրո-  
չում են այնտեղ, վորտեղ շատ կղզիներ կան և այդ կըդ-  
զիներնի բարից շատ հեռու չեն:

Յերբեմն ել թուչում են վոչ ուղղակի դեպի հարավ,  
կամ դեպի արևմուտք, կամ դեպի արևելք և ավելի հետո  
դառնում են դեպի հարավ:

Ուսումնասիրել այդ ուղիները այնքան ել հեշտ: Չեր  
և շատ դիտողություններ ելին պետք, վոր հետեւին թրո-  
չունների չուփն:

Մեծ ոգուտ տվեց այդ բանում ողակավորումը: Աշ-  
նանն աշխատում են ծուղակներով վորսալ վորքան կարելի  
յե շատ թուչուններ, նրանց վոտներին անց են կացնում  
այնպիսի թեթև ողակներ ինչպես այդ արավ անտառապե-

տը կոռւնկիկին, իսկ ողակների վրա գրում են տեղի անու-  
նը և ժամանակը, թե յերբ ե բունված յեղել թուչունը: Այդ-  
պիսի թուչունը իր նմանների հետ միասին թուչում ե հե-  
ռուն՝ ոտար կողմեր: Վորի ողակը հեռվից աչքի յե ընկ-  
նում: Այդպիսի թուչուն աշխատում են բոնել կամ սպա-  
նել և կարդում են ողակի վրայի գիրը:

Ողակն ուղարկում են փոստ այնտեղ, վորտեղից թու-  
չուն և յեկած, վորպեսդի իմացվի թե ուր և հասել  
թուչունը չկելիս: Այդ կերպ հաջողվեց շատ լավ իմանալ թե  
ուր և վարտեղից են անցնում նրանց թոփչքի ճանապարհ-  
ները:

Այդ կերպ իմացան, վոր շվեդական ագռավները չվում  
են Անգլիա ձմեռելու, իսկ արևելյան Սիբիրից բազեները  
գնում են ձմեռելու հնդկաստան և Մադագասկար:

Ելի գեռ շատ թուչունների չվելու ճանապարհները  
այնքան ել լավ հայտնի չեն, մանավանդ մանր թուչուն-  
ների, վորոնց շատ գժվար և վորոշել հեռվից հասարակ  
աչքով:

Խորհրդացին միության մեջ թուչուններին ողակավո-  
րում ե (Биостанция Юных Натуралистов) Յերիտա-  
սարդ նատուրալիստների բիոկայանը, վորի հասցեն այս-  
պես ե. Москва, 14 Ростокинский проезд, 9.97 цен-  
тральное бюро Юных Натуралистов.

Յեթե աշնանը գուք կկարողանաք բռնել արդական մի  
ողակավորված թուչուն, հանեցեք վոտից ողակը, ուղղեցեք  
և արտադրեցեք թե ինչե գրված նրա վրա: Նշանակեցեք  
ձշտությամբ թիվը, ամիսը և բռնելու տեղը և ողակն ու-  
ղարկեցեք հիշված հասցեյով:

Սրանով գուք մեծ ծառարտություն արած կինիք գի-  
տությանը. և այն գժվար գործին, վոր ուսումնասիրում  
յե թուչունների չվելու ճանապարհները:



ՀՀ Ազգային գրադարան



NL0383864

4785

ԳԻՒԾ 25 ԿՈՊ.

С. ПОКРОВСКИЙ  
ПРИКЛЮЧЕНИЕ  
МОЛОДОГО ЖУРАВЛЯ  
ГИА ССР АРМЕНИИ 1931 ЭРИВАНЬ

Տերևիրեն 1948 թ.

ՊԵՏՀԱՆԱԿ № 1641 ԳՐԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ № 6415 ՏՐՎԱԴՐՈՒՅԹ 4000  
ՉԻՄ. ՊԵՏՀԱՆԱԿԻ ՊԱՍ. № 2621

